

**ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Պետական գույքի կառավարման 2024-2026 թվականների ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) կատարման մասին սույն հաշվետվությունը (այսուհետ՝ հաշվետվություն) ներկայացվում է «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 17-րդ հոդվածի 5-րդ մասի և կառավարության 2024 թվականի փետրվարի 8-ի N 199-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 21-րդ կետի համաձայն:

2. Հաշվետվությունն ընդգրկում է 2024 թվականի օրացուցային տարին (այսուհետ՝ հաշվետու ժամանակաշրջան):

3. Հաշվետվությունը ներկայացվում է որպես հաշվետու ժամանակաշրջանում պետական գույքի կառավարման ոլորտում իրականացված միջոցառումների և դրանց արդյունքների ամփոփում: Միաժամանակ, ծրագրի 2023-2024 թվականների ընթացքում մասնավորեցման, օտարման և օգտագործման տրամադրման արդյունքները և դրամական մուտքերը գնահատելու համար կից ներկայացվում է եկամտային հոսքերի վերաբերյալ 2023-2024 թվականների (31.12.2023 թ.-31.12.2024 թ.) դրամական մուտքերի համեմատականը.

հազար հայկական դրամ

Հ/Հ	Վաճառքի ձևը	Ընդամենը 31.12.2023թ.	Ընդամենը 31.12.2024թ.	Տարբերությունը	Աճը կամ նվազեցումը
-----	-------------	--------------------------	--------------------------	----------------	-----------------------

Ընդամենը մուտքեր, այդ թվում՝		15,390,797.2	18,630,284.8	3,239,487.6	21.05%
պետական բյուջեի մուտքեր		12,889,242.9	16,855,205.8	3,965,962.9	30.77%
համայնքային բյուջեի մուտքեր		2,287,389.0	1,531,974.8	-755,414.2	-33.03%
ՊՈԱԿ-ներ		214,165.3	240,031.0	25,865.7	12.08%
1.	Պետական գույքի, այդ թվում՝ նաև հողի օտարումից մուտքեր ընդամենը, այդ թվում՝	10,638,138.8	17,197,009.4	6,558,870.6	61.65%
պետական բյուջե		9,467,474.8	15,759,752.3	6,292,277.5	66.46%
համայնքային բյուջե		1,170,664.0	1,437,257.2	266,593.1	22.77%
2.	Պետական գույքի մասնավորեցումից մուտքեր ընդամենը, այդ թվում՝	3,790,321.6	321,688.9	-3,468,632.8	-91.51%
պետական բյուջե		2,673,596.6	226,971.2	-2,446,625.4	-91.51%
համայնքային բյուջե		1,116,725.0	94,717.7	-1,022,007.3	-91.52%
3.	Պետական գույքի վարձակալությունից մուտքեր՝	673,351.4	798,074.4	124,723.0	18.52%
4.	Շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման վարձավճարից մուտքեր ընդամենը, այդ թվում՝	288,985.3	313,512.1	24,526.8	8.49%
պետական բյուջե		74,820.1	70,407.9	-4,412.2	-5.90%
համայնքային բյուջե		214,165.3	240,031.0	25,865.7	12.08%
չբաշխված գումար		0.0	3,073.2	3,073.2	

Ամփոփում. վերը նշված ուղղություններով ստացված դրամական միջոցները կազմել են 18,630,284.8 հազար հայկական դրամ, որից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է փոխանցվել 16,855,205.8 հազար հայկական դրամ:

4. Հաշվետու ժամանակաշրջանում իրականացված միջոցառումներն ուղղված են եղել ծրագրով սահմանված նպատակների իրագործմանը:

5. Պետական գույքային հարաբերությունները կանոնակարգող օրենսդրության բարեփոխման ոլորտում 2024 թվականին կոմիտեի կողմից մշակվել և օրենսդրությամբ սահմանված կարգով ընդունվել են թվով 13 իրավական ակտեր, մասնավորապես.

1) մշակվել և 2024 թվականի մարտի 20-ին ընդունվել է «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-135-Ն օրենքը, որով «Արտակարգ իրավիճակների օդանավակայան» ՓԲԸ-ն հանվել է «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի մաս կազմող՝ «2017-2020 թվականներին մասնավորեցման առաջարկվող պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների, մասնավորեցման օբյեկտների (այդ թվում՝ մասնավորեցման նախորդ ծրագրերում ընդգրկված)» ցանկից.

2) 2024 թվականի սեպտեմբերի 10-ին ընդունվել է «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի կատարման 2023 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» ՀՕ-333-Ն օրենքը.

3) 2024 թվականի հունվարի 25-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի N 562-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» կառավարության N 109-Ն որոշումը, որի նպատակն է պետական գույքի հաշվառման համակարգի կատարելագործումը, ինչպես նաև հաշվառման համակարգից օպերատիվ և համապարփակ տեղեկատվության ստացումը.

4) 2024 թվականի հունվարի 25-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի N 595-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» կառավարության N 119-Ն որոշումը, որով ընդլայնվել են պետական գույքի անհատույց օգտագործման տրամադրման պայմանները.

5) 2024 թվականի փետրվարի 8-ին ընդունվել է «Պետական գույքի կառավարման 2024-2026 թվականների ծրագիրը հաստատելու մասին» կառավարության N 199-Լ որոշումը.

6) 2024 թվականի ապրիլի 18-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 587-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» կառավարության N 540-Ն որոշումը, որի նպատակն է որոշման համապատասխանեցումն օրենսդրության պահանջներին.

7) 2024 թվականի ապրիլի 25-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հունիսի 25-ի N 387 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» կառավարության N 573-Ն որոշումը, որի նպատակն է որոշման համապատասխանեցումն օրենսդրության պահանջներին.

8) 2024 թվականի մայիսի 23-ին ընդունվել է «Պետական գույքի կառավարման 2021-2023 թվականների ծրագրի կատարման 2023 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» կառավարության N 770-Ա որոշումը.

9) 2024 թվականի հունիսի 20-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 587-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» կառավարության N 935-Ն որոշումը, որի նպատակն է պետական գույքի վաճառքի գործընթացի համապատասխանեցումն օրենսդրական պահանջներին.

10) 2024 թվականի հուլիսի 11-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N 346-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» կառավարության N 1091-Ն որոշումը, որով երկարաձգվել են պետական մարմիններին ամրացված պետական ոչ առևտրային կազմակերպությունների, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի հանձնման գործընթացի ժամկետները.

11) 2024 թվականի օգոստոսի 15-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի N 595-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» կառավարության N 1289-Ն որոշումը, որով հնարավորություն կտրվի կառավարության հավանությանն արժանացած ծրագրերին, պետական սեփականություն հանդիսացող գույքը տրամադրել անհատույց օգտագործմամբ՝ որոշակի արտոնյալ պայմաններով:

12) 2024 թվականի հոկտեմբերի 3-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2102-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» կառավարության N 1568-Ն որոշումը, որի արդյունքում հնարավորություն կստեղծվի բարձրացնել պետական գույքի մասնավորեցման, օտարման գործարքներով սահմանված պայմանագրային պարտավորությունների կատարման մակարդակը:

13) 2024 թվականի դեկտեմբերի 19-ին կառավարության կողմից ընդունվել է «Պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրատվության և նվիրաբերության ու պետական, բյուջետային հիմնարկների տնօրինության տակ գտնվող հանրակացարանային բնակելի տարածքների նվիրատվության և հանրակացարանային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման կարգերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին նվեր ընդունելու լիազորություններ վերապահելու մասին» N 2037-Ն որոշումը, որի նպատակն է պետական գույքի նվիրատվության և նվիրաբերության գործընթացի միասնական և ամբողջական կառավարումը, ինչն էլ կնպաստի պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացմանը:

ԳԼՈՒԽ 2. ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

6. Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություն) կառավարման համակարգի կատարելագործման, դրանց

կողմից տնօրինվող գույքի օգտագործման արդյունավետության բարձրացման համար ծրագրով նախատեսվել էր հստակեցնել կազմակերպությունների գույքի կազմն ու կառուցվածքը և, միաժամանակ, օպտիմալացնել այդ կազմակերպությունների քանակը:

7. Ծրագրի N 1՝ Մասնավորեցման ծրագրում չընդգրկված՝ լուծարման առաջարկվող պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների ցանկում նշված միջոցառումներ հաշվետու ժամանակահատվածում առկա չեն:

8. Ծրագրի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված միջոցառումների մասով կատարվել է հետևյալը՝

1) **ծրագրի N 2՝** Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինությանը հանձնվող՝ չօգտագործվող կամ ըստ նպատակային նշանակության չօգտագործվող կամ մասնակիորեն օգտագործվող անշարժ պետական գույքի ցանկում նշված միջոցառումներ հաշվետու ժամանակահատվածում առկա չեն:

2) կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N 346-Ն որոշման կատարման շրջանակներում Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) տնօրինությանն է հանձնվել 36 միավոր անշարժ գույք:

9. Հաշվետու ժամանակաշրջանում «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքով հաստատված N 1 հավելվածի ցանկում, այդ թվում՝ **ծրագրի N 3՝** Մասնավորեցման ծրագրում ընդգրկված՝ չմասնավորեցված (չլուծարված) առևտրային կազմակերպությունների և այլ օբյեկտների մասնավորեցման և /կամ լուծարման առաջարկելու ժամկետների ցանկում ընդգրկված ընկերություններից՝

1) «Հրազդան մարզահամալիր» ՓԲԸ-ի 100 տոկոս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը կառավարության 2024 թվականի օգոստոսի 29-ի N 1388-Ա որոշմամբ մասնավորեցվել են ուղղակի վաճառքի ձևով (բաժնետոմսերի ձեռքբերման համար ամբողջ գումարի վճարման ժամկետը 10 տարի է՝ յուրաքանչյուր տարվա համար

վճարումները պետք է իրականացվեն հավասարաչափ՝ ժամկետից շուտ վճարման հնարավորությամբ) նախօրոք հայտնի գնորդին.

2) մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Արմենիկում» ՓԲԸ-ի 100 տոկոս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը մասնավորեցնելու մասին կառավարության որոշման նախագիծ.

3) բազմաթիվ անգամ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Հեր-Հեր» հիդրոէլեկտրակայան» ՓԲԸ-ի 100 տոկոս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը մասնավորեցնելու մասին կառավարության որոշման նախագիծ: Բոլոր դեպքերում հարցը հանվել է ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի նիստերից: Վերջին անգամ հարցը հանվել է 2024 թվականի հոկտեմբերի 1-ի նիստից՝ ներկայացված նախագիծը բավարար հիմնավորված չլինելու պատճառաբանությամբ պայմանավորված.

4) մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Հանրապետական անձավաբուժական կենտրոն» ՓԲԸ-ի 100 տոկոս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը մասնավորեցնելու մասին կառավարության որոշման նախագիծ.

5) մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Հավաքական թիմերի մարզական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 100 տոկոս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը մասնավորեցնելու մասին կառավարության որոշման նախագիծ, որը հանվել է ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի նիստից՝ առաջարկելով Պետական գույքի կառավարման կոմիտեին նախաձեռնել աշխատանքներ՝ գույքը բոլոր դատական վեճերից մաքրելու ուղղությամբ:

10. Ծրագրի N 4՝ «Մասնավորեցման ծրագրում չընդգրկված, օտարման առաջարկվող անշարժ գույքի և անշարժ գույքի, որի պետությանը պատկանող գույքային իրավունքներն առաջարկվում է փոխանցել իրավաբանական ու ֆիզիկական անձանց» ցանկում ընդգրկված գույքից օտարման է ներկայացվել 40 անվանում գույք, որոնցից հաշվետու ժամանակահատվածում օտարվել է 7 անվանում գույք, իսկ 1 գույք

ամրագրվել է Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարությանը, ինչի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հաշվետվության N 1 ցանկում:

11. Ծրագրի N 5՝ «Պետական գույքի վարձակալությունից սպասվելիք մուտքերի վերաբերյալ» ցանկով՝ 2024 թվականին պետական բյուջե ծրագրով *կանխատեսվող* (սպասվելիք) դրամական մուտքերը սահմանվել է 740,907.6 հազար հայկական դրամ, մինչդեռ, **2024 թվականին վարձակալությունից պետական բյուջե է մուտքագրվել 798,074.4 հազար հայկական դրամ:** Այլ կերպ՝ կատարողականը 2024 թվականին կանխատեսվածի նկատմամբ կազմել է 108 %:

12. Ծրագրի N 6՝ «Պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման վարձավճարների սպասվելիք մուտքերի վերաբերյալ» ցանկի նախատեսվածի կատարողականը հետևյալն է՝ շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի ծառայություններից վարձավճարները ծրագրով 2024 թվականի համար սպասվելիք (*կանխատեսվող*) դրամական մուտքերը սահմանվել է 330,000 հազար հայկական դրամ, մինչդեռ, **2024 թվականին այն կազմել է 313,512.1 հազար հայկական, որից 70,407.9 հազար հայկական դրամը մուտքագրվել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե** (այդ թվում՝ այլ կառավարչական հիմնարկների արտաբյուջեներ), **համապատասխան ՊՈԱԿ-ների բյուջեներ՝ 240,031.0 հազար հայկական դրամ, չբաշխված գումարը՝ 3,073.2 հազար հայկական դրամ:**

13. Ծրագրի N 7՝ «Մասնավորեցված, օտարված, նվիրաբերված, վարձակալությամբ, ինչպես նաև անհատույց օգտագործման իրավունքով տրված օբյեկտների գնորդների, նվիրառուների, վարձակալների և օգտագործողների կողմից ծրագրային ժամանակահատվածի (2024-2026 թթ.) ընթացքում ստանձնած ներդրումային պարտավորությունները» ցանկում ընդգրկված, գնորդների կողմից պայմանագրերով ստանձնված պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է N 2 ցանկում: Հաշվետու ժամանակահատվածում՝ կից N 2 ցանկում

ներկայացված պարտավորությունները *կատարվել են թվով 49 պայմանագրերով*, միաժամանակ՝

1) 4 պայմանագրերով (2 նվիրաբերության և 2 վարձակալության) նախատեսված *պարտավորություններ չեն եղել*.

2) 3 պայմանագրերով՝ 1 մասնավորեցման պայմանագրի չկատարման հետևանքով հաշվարկվել է տուգանք, 1 մասնավորեցման պայմանագրով պարտավորությունը չկատարելու հետևանքով գործը գտնվում է դատական գործընթացում, 1 մասնավորեցման պայմանագրով պարտավորությունը կատարվել է ժամկետից շուտ.

3) 6 պայմանագրերով (3 անհատույց օգտագործման և 3 օտարման) ստանձնած պարտավորություններ *կատարվել են ժամկետից շուտ*.

4) 1 օտարման պայմանագրով ստանձնած պարտավորություն *գտնվում է դատական գործընթացում*.

5) 1 օտարման պայմանագրով ստանձնած պարտավորության կատարման ժամկետ սահմանվել է 2024-2025 թվականները, և *դեռևս տեղեկատվություն չի ներկայացվել*.

6) 1 օտարման պայմանագրով ստանձնած պարտավորության կատարման ժամկետ է սահմանվել 2025 թվականը, *սակայն կատարվել է 2024 թվականին*.

7) 1 նվիրաբերության պայմանագրով ստանձնած պարտավորության հետ կապված նախապատրաստվում է կառավարության համապատասխան որոշման նախագիծ՝ նախկինում սահմանված պարտավորության ժամկետների կատարման *փոփոխման համար*.

8) 1 անհատույց օգտագործման իրավունքով տրված գույքի պայմանագրային պարտավորությունները չեն կատարվել, ինչի հետևանքով *հաշվարկվել է տուգանք*.

9) 5 անհատույց օգտագործման իրավունքով տրված գույքի *պայմանագրերը լուծվել են*.

10) 1 նվիրաբերության պայմանագրի *լուծման համար շրջանառվում է կառավարության համապատասխան որոշման նախագիծ*.

11) 2024 թվականին կնքվել են մասնավորեցման, օտարման, պետական գույքի անհատույց օգտագործման, վարձակալության, անշարժ գույքի նվիրաբերության պայմանագրեր, որոնցով ստանձնվել են հետևյալ ներդրումային պարտավորությունները՝ օտարման 6 պայմանագրերով 32 351 0000 000 հայկական դրամի, մասնավորեցման 1 պայմանագրով 1 200 000 000 հայկական դրամի, վարձակալության 5 պայմանագրերով 1 302 185 610 հայկական դրամի, անշարժ գույքի նվիրաբերության 2 պայմանագրերով 2 800 000 000 հայկական դրամի և պետական գույքի անհատույց օգտագործման 1 պայմանագրով 146 000 000 դրամի:

14. Ծրագրի N 7 ցանկում ընդգրկված կազմակերպությունների տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերլուծության հետ կապված՝ ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման մասով կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1262-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

1) կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1262-Ն որոշմամբ հաստատված (հավելված N 1) կարգի համաձայն իրականացվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ և վերլուծություն 2023 թվականի տարեկան տվյալների հիման վրա: Վերլուծության արդյունքներն ամփոփ տեղեկանքների տեսքով ներկայացվել են Վարչապետին և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1262-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածով՝ պետական կառավարման մարմինների կողմից 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ անցկացնելու, դրանց գործունեությունը վերլուծելու և արդյունքներն ամփոփելու կարգի

համաձայն կոմիտեն 2023 թվականի տարեկան տվյալների հիման վրա մոնիթորինգ է իրականացրել **141** կազմակերպությունների համար.

3) մոնիթորինգի ենթարկված 141 կազմակերպությունից 93 կազմակերպություն (65,96%) աշխատել են շահույթով, 44 կազմակերպություն (31,21%) աշխատել են վնասով, 4 կազմակերպություն (2,83%) շահույթ (վնաս) չեն ձևավորել.

4) 2023 թվականի գործունեության արդյունքում կազմակերպությունների կողմից ձևավորած ընդհանուր վնասը կազմել է 8,078,445.62 հազար հայկական դրամ, ընդ որում, 2022 թվականի արդյունքներով ընդհանուր վնասը կազմել է 7,274,509.41 հազար հայկական դրամ: Այսինքն, 2023 թվականին 2022 թվականի համեմատ ընդհանուր վնասն աճել է 803,936.21 հազար հայկական դրամով (11,05%).

5) համաձայն ներկայացված տեղեկատվության՝ վնասը նախորդ տարվա համեմատ աճել է հիմնականում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կազմակերպություններում՝ 3,394,223.0 հազար հայկական դրամով, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կազմակերպություններում՝ 351,461,7 հազար հայկական դրամով, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի կազմակերպությունում՝ 18,577.40 հազար հայկական դրամով, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կազմակերպություններում՝ 11,383.96 հազար հայկական դրամով, Պետական գույքի կառավարման կոմիտեի կազմակերպություններում՝ 60,650.0 հազար հայկական դրամով, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի ենթակայության կազմակերպությունում՝ 30,106.4 հազար հայկական դրամով, Երևանի քաղաքապետարանի ենթակայության «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ում՝ 783,225.7 հազար հայկական դրամով: Վնասը նախորդ տարվա համեմատ նվազել է հիմնականում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կազմակերպություններում՝ **24,987.4 հազար հայկական դրամով**, Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական

արդյունաբերության նախարարության կազմակերպություններում՝ **712,836.3 հազար հայկական դրամով**, Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Հայաստանի Հանրապետության Լոռու, Հայաստանի Հանրապետության Շիրակի, Հայաստանի Հանրապետության Սյունիքի և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետների աշխատակազմերի ենթակայության կազմակերպություններում՝ համապատասխանաբար **32,677.4 հազար հայկական դրամով**, **60,079.3 հազար հայկական դրամով**, **126,626.9 հազար հայկական դրամով**, **54,803.7 հազար հայկական դրամով** և **50,070.6 հազար հայկական դրամով**.

6) 2023 թվականի տարեկան տվյալներով շահույթով աշխատած կազմակերպությունների ընդհանուր զուտ շահույթը կազմել է **13,744,936.26 հազար հայկական դրամ**, ընդ որում, 2022 թվականի արդյունքներով՝ ընդհանուր զուտ շահույթը կազմել է **73,005,934.90 հազար հայկական դրամ**: Այսինքն, 2023 թվականին 2022 թվականի համեմատ զուտ շահույթի ընդհանուր ծավալը նվազել է **59,260,998.64 հազար հայկական դրամով (81,17%)**: Զուտ շահույթի ծավալը հաշվետու տարում նախորդ տարվա համեմատ նվազել է հիմնականում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կազմակերպություններում՝ **59,889,002.20 հազար հայկական դրամով** (ընդ որում, հաշվետու տարում շահույթի ծավալի նվազումը հիմնականում պայմանավորված է նախորդ տարի շահույթով աշխատած, սակայն հաշվետու տարում ներքոհիշյալ կազմակերպությունների կողմից ձևավորված վնասով՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից ձևավորված վնասը կազմել է 4,280,185.0 **հազար հայկական դրամ**, «Էներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի վնասը՝ 505,651.0 **հազար հայկական դրամ**, «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի վնասը՝ 47,853.0 **հազար հայկական դրամ**, «Ջրառ» ՓԲԸ-ի վնասը՝ 249,822.9 **հազար հայկական դրամ**, «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի վնասը՝ 34,706.0 **հազար հայկական դրամ**), Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի

ենթակայության կազմակերպություններում՝ **46,814.84 հազար հայկական դրամ**: Շահույթով աշխատած մի շարք կազմակերպությունների զուտ շահույթը նախորդ տարվա համեմատ աճել է հիմնականում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կազմակերպությունների մոտ՝ **274,385.2 հազար հայկական դրամով**, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կազմակերպություններում՝ **248,080.5 հազար հայկական դրամով**, Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կազմակերպություններում՝ **638,692.7 հազար հայկական դրամով**, Հայաստանի Հանրապետության հանրային հեռարձակողի խորհրդի կազմակերպություններում՝ **145,894.0 հազար հայկական դրամով**, Պետական գույքի կառավարման կոմիտեի կազմակերպություններում՝ **89,607.3 հազար հայկական դրամով**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կազմակերպություններում՝ **228,842.5 հազար հայկական դրամով**, Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Հայաստանի Հանրապետության Կոտայքի և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետների աշխատակազմերի ենթակայության կազմակերպություններում համապատասխանաբար՝ **44,795.7 հազար հայկական դրամով**, **36,317.1 հազար հայկական դրամով և 30,649.9 հազար հայկական դրամով**.

7) 2023 թվականի տարեկան տվյալներով՝ կազմակերպությունների արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթը կազմել է 266,451,163.28 **հազար հայկական դրամ**, աշխատակիցների թիվը կազմել է 25 881 մարդ.

8) 2022 և 2023 թվականների տարեկան ֆինանսական արդյունքներով վնաս ձևավորած առևտրային կազմակերպությունների ֆինանսական վիճակի վատթարացման և ձեռնարկված միջոցների վերաբերյալ պետական մարմինների կողմից ներկայացված պարզաբանումների արդյունքում կազմվել է կազմակերպությունների գործունեության բարելավմանն ուղղված կոմիտեի առաջարկների վերաբերյալ տեղեկանք և ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ.

9) Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1262-Ն որոշմամբ հաստատված (հավելված N 2) կարգի համաձայն՝ իրականացվել է կազմակերպությունների արդյունավետության որոշում, գործադիր մարմինների ղեկավարների կատարած աշխատանքի գնահատում՝ ելնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տարեկան միջին տոկոսադրույքից, որը 2023 թվականի համար կազմել է 10,3 %, ըստ իրացման ծավալի կամ ըստ ոչ ընթացիկ ակտիվների շահութաբերության մակարդակից և լրացուցիչ ֆինանսական ցուցանիշների դրական դինամիկայից: Գնահատման համար հիմք է հանդիսանում պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված տեղեկատվությունը.

10) վերլուծության ենթարկված և գործունեություն իրականացրած 141 կազմակերպությունից 17 (12,04%) կազմակերպության արդյունավետության և գործադիր մարմինների ղեկավարների աշխատանքները գնահատվել են դրական, 5 (3,53 %) կազմակերպությանը՝ բավարար, 63 (44,67%) կազմակերպությանը՝ պայմանական բավարար և 56 (39,76%) կազմակերպությանը՝ անբավարար:

15. Ծրագրում ընդգրկված պետական գույքի մասնավորեցման գործարքների իրականացման արդյունքում դրամական մուտքերը 2024 թվականին կազմել են **321,688.9 հազար հայկական դրամ** կամ 2023 թվականի նույն ժամանակահատվածի 3,790,321.6 հազար հայկական դրամի համեմատ նվազել է 91.52 %-ով, **որից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է փոխանցվել 226,971.2 հազար հայկական դրամ** կամ 2023 թվականի նույն ժամանակահատվածի 2,673,596.6 հազար հայկական դրամի համեմատ նվազել է 91.51 %-ով, **իսկ համապատասխան համայնքային բյուջե՝ 94,717.7 հազար հայկական դրամ** կամ 2023 թվականի նույն ժամանակահատվածի 1,116,725.0 հազար հայկական դրամի համեմատ նվազել է 91.52 %-ով:

16. Հաշվետու ժամանակաշրջանում պետական գույքի (այդ թվում՝ նաև հողի) օտարումից ստացված միջոցները կազմել են 17,197,009.4 հազար հայկական դրամ կամ 2023 թվականի նույն ժամանակահատվածի 10,638,138.8 հազար դրամի

համեմատ աճը կազմում է 61.65%, **որից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է մուտքագրվել 15,759,752.3 հազար հայկական դրամ** կամ 2023 թվականի նույն ժամանակահատվածի 9,467,474.8 հազար հայկական դրամի համեմատ աճել է 66.46 %-ով, **իսկ համապատասխան համայնքային բյուջեներ՝ 1,437,257.2 հազար հայկական դրամ** կամ 2023 թվականի նույն ժամանակահատվածի 1,170,664.0 հազար հայկական դրամի համեմատ աճել է 22.77 %-ով:

17. Բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման և կացարանով ապահովման ուղղությամբ կոմիտեի կողմից իրականացվում է պետական սեփականություն համարվող հանրակացարանային բնակելի տարածքների նվիրատվության և սեփականաշնորհման գործընթացը, որի նպատակն է բնակչության բնակարանային պայմանների բարելավումը և, սեփականության իրավունքի հաստատումով, սոցիալական և կենցաղային խնդիրների լուծումը: Այսպես, հաշվետու ժամանակահատվածում բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման, այդ նպատակով պետական սեփականություն համարվող հանրակացարանային տարածքների նվիրատվության և սեփականաշնորհման գործընթացի ավարտման գործընթացի ուղղությամբ նվիրատվությամբ (անհատույց սեփականաշնորհմամբ) ընդհանուր թվով տրամադրվել են 16 բնակելի տարածքներ՝ 15 ընտանիքների (29 անձանց), որից՝

1) կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 404 որոշման պահանջների համաձայն՝ կոմիտեի կողմից մշակվել և կառավարության կողմից ընդունվել են «1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց կողմից զբաղեցրած բնակելի տարածքները սեփականաշնորհելու մասին» կառավարության թվով 1 որոշում, որով առաջարկվել է թվով 6 բնակելի տարածքներ սեփականաշնորհել այնտեղ բնակվող 5 ընտանիքների (10 անձանց):

2) կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 305-Ն որոշման պահանջների համաձայն՝ կոմիտեի կողմից նախապատրաստվել և կառավարության կողմից ընդունվել

են կառավարության թվով 2 որոշումներ, որոնցով առաջարկվում է նվիրատվությանը տրամադրել 10 բնակելի տարածքներ՝ 10 ընտանիքների (19 անձանց):

Ց Ա Ն Կ N1

ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ, ՕՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ, ՈՐԻ՝
ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ Է ՓՈԽԱՆՑԵԼ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒ ՖԻԶԻԿԱԿԱՆ
ԱՆՁԱՆՑ

NN	NN (Ծրագրի հերթական համարը)	Գույքի անվանումը	Գույքի հասցեն	Շենք, շինությունների մակերեսը (քառ. մետր)	Հողամասի մակերես (քառ մետր)	Լիազոր մարմնի անվանումը	Սեփակա- նության վկայականը	Կադա- ստրային ծածկագիրը	Օտարման ընթացքի վերաբերյալ
1	7	Ավտոտնակներ	Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Հատիսի փ., թիվ 6/5	280.8	474.36	Կոտայքի մարզպետի աշխատակազմ	26052023- 07-0167	07-002-0116- 0187	Օտարվել է աճուրդով 21.12.2023 թ. N 570-Ա հրաման
2	8	Զորամասի տարածք	ք. Երևան, Արշակունյաց պողոտա 4/1	15 122.83	64 900.64	ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	14092022- 01-0317	01-006- 0307-0062	Օտարվել է մրցույթով կառավարության 07. 10. 2023 թ. N 1528-Ա որոշում

3	9	Շենքի 9-րդ հարկից 2 սենյակ	ք. Երևան, Կիկյան 16 շենք 9/2	237.9 (որից 169.9 ընդհանուր համատեղ սեփական.)	Բաժնային 0.3278 հա, սեփականատիրոջ բաժնեմասը կազմում է 68/6703	ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	03082022-01-0079	01-003-0123-0002-001	Կառավարության 27.12.2024 թ.-ի N 2079-Ա որոշմամբ ամրագրվել է Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարությանը:
4	13	Շենք-շինություններ	Կոտայքի մարզ, Ակունք համայնք, գյուղ Նոր Գյուղ, 1-ին փողոց 7	11 603.74	29383	Հայաստանի Հանրապետության ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	30032023-07-0089	07-049-0030-0014	Օտարվել է մրցույթով կառավարության 11.08.2023 թ. N 1342-Ա որոշում
5	45	Հիվանդանոցի շենք	Արարատի մարզ, ք. Արտաշատ, Ա. Խաչատրյան փողոց 116/1	4 945.11	6 858	ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	19092023-03-0017	03-001-0039-0062	Օտարվել է աճուրդով կառավարության 19. 10. 2023 թ. N 1785-Ա որոշում

6	63	Վարչական շենք/ՎԻՃ. ՎԱՐՉ	Անի համայնք, քաղաք Մարալիկ, Շահինյան փողոց 10	527.14	535.3	Գույքն ամրացված է Պետական գույքի կառավարման կոմիտեին	06112023- 08-0023	08-003- 0029-0089	Օտարվել է աճուրդով 06.11.2024 թ. N 360-Ա հրաման
7	81	Մասնաշենք/ԱՍ ՀՆ	համայնք Արովյան ք., Հատիսի փողոց թիվ 6/29 մասնաշենք	1846.3	1702	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	11112016- 07-0070	07-002-0116- 0376	Օտարվել է աճուրդով կառավարության 26. 09. 2024 թ. N 1507-Ա որոշմամբ
8	89	Կիսաքանդ շինություններ/ ՊԳԿԿ	Մարզ Արմավիր, համայնք Փարաքար, գյուղ Մեր- ձավան 5-րդ փողոց, 6/2	2761.5	4700	Հայաստանի Հանրապետության ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	28022024- 04-0121	04-065- 0075-0001	Օտարվել է աճուր- դով 30. 04. 2024 թ. N 144-Ա հրաման

ՑԱՆԿ N 2

ՄԱՍՆԱՎՈՐԵՑՎԱԾ, ՕՏԱՐՎԱԾ, ՆՎԻՐԱԲԵՐՎԱԾ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐՎԱԾ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՆՈՐԴՆԵՐԻ, ՆՎԻՐԱՌՈՒՆԵՐԻ, ՎԱՐՁԱԿԱԼՆԵՐԻ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ, ԾՐԱԳՐԱՅԻՆ
ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ (2024-2026 ԹԹ.) ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՏԱՆՁՆՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

NN ը/կ	Պայմա- նագրի տե- սակը և հա- մարը	Մասնավորեցված և օտարված, ինչպես նաև անհատույց օգտագործման իրավունքով տրված օբյեկտների անվանումները կամ հասցեները	Ծրագիր իրականացնողը	2024-2026 թթ. ընթացքում ներդրումների և այլ ծրագրերի իրականացման կանխատեսումներ	2024 թ.-ի կանխատեսում	2024 թ.-ին կատարված	Կանխատեսում	
							2025 թ.	2026 թ.
Մասնավորեցված օբյեկտների գնորդների կողմից ստանձնված պարտավորությունները								
1.	225-Մ	Քաղաք Հրազդան, Սպանդարյան փողոց	«Հրազդան» կինոթատրոն	Պրոֆիլի պահպանում	Պրոֆիլի պահպանում	Պահպանվել է	Պրոֆիլի պահպանում	-

2.	857-ՈԻ	Քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս	«Բարեկամություն» կինոթատրոն	Պրոֆիլի պահպանում	Պրոֆիլի պահպանում	Պահպանվել է	Պրոֆիլի պահպանում	-
3.	435-Ու	Երևան քաղաքի Խանջյան 19	«Լեոնամետալուր- գիայի ինստիտուտ»	Պրոֆիլի պահպանում	Պրոֆիլի պահպանում	Պահպանվել է	Պրոֆիլի պահպանում	Պրոֆիլի պահպանում
4	883-ՈԻ	«Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիր» ՓԲԸ	«Ծաղկաձորի սպորտային համալիր» ՍՊԸ	2-րդ տարի լողավազանի և թենիսի կենտրոնի վերանորոգման և կառուցման աշխատանքներ - նախատեսված և կատարված ներդրումների տարբերությունը	2-րդ տարի լողավազանի և թենիսի կենտրոնի վերանորոգման և կառուցման աշխատանքներ - նախատեսված և կատարված ներդրումների տարբերությունը	Կատարվել է ժամկետից շուտ	-	-
5	01-Մ	«Կուրորտաբանու- թյան և ֆիզիկական	Վիդեոտա Սարգսյան, Աննա Գյոզալյան	350 000 000	150 000 000	Հաշվարկվել է տուգանք 30 000 000 հայկական դրամ	200 000 000 հայկական դրամ	Պրոֆիլի պահպանում

		բժշկության գիտա- հետազոտական ինստիտուտ» ՓԲԸ						
6	881-Ու	Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն, ՓԲԸ-ի 90% պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր	«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ	Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեին Միջուկային օրենսդրության և ԵՄ անվտանգության դիրեկտիվներին մոտարկման և Ատոմային էներգիայի միջազգային գործակալության անվտանգության ստանդարտներին համապատասխանեցման աջակցություն և այլն:	Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեին Միջուկային օրենսդրության և ԵՄ անվտանգության դիրեկտիվներին մոտարկման և Ատոմային էներգիայի միջազգային գործակալության անվտանգության ստանդարտներին համապատասխա- նեցման աջակցություն և այլն:	Կատարվում է	Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեին Միջուկային օրենսդրության և ԵՄ անվտանգության դիրեկտիվներին մոտարկման և Ատոմային էներգիայի միջազգային գործակալության անվտանգության ստանդարտներին համապատասխա- նեցման աջակցություն և այլն:	Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեին Միջուկային օրենսդրության և ԵՄ անվտանգության դիրեկտիվներին մոտարկման և Ատոմային էներգիայի միջազգային գործակալության անվտանգության ստանդարտներին համապատասխա- նեցման աջակցություն և այլն:

7.	865-Ու	Երևան քաղաքի Բագրատունյաց 73 և «Բագավան» ՓԲԸ 100% բաժնետոմսեր	«Նեյտրոն ԳԱՄ» ՓԲԸ	Պրոֆիլի պահպանում	Պրոֆիլի պահպանում	Գտնվում է դատական գործընթացում	Պրոֆիլի պահպանում	Պրոֆիլի պահպանում
Օտարված օբյեկտների գնորդների կողմից ստանձնված ներդրումային պարտավորությունները								
8.	889-Օ	Երևան քաղաքի կենտրոն վարչական շրջանի Ծովակալ Իսակովի պողոտա 13/12 հասցե	«Արմենիա Վայն գործարան» ՍՊԸ	Ստանձնել է 400 000 000 հայկական դրամ, որից մնացել է կատարելու 209 330 000 հայկական դրամ և 300-350 աշխատատեղ	209 330 000 հայկական դրամ և 300-350 աշխատատեղ	Ժամկետից շուտ է կատարվել	-	-
9.	875-Օ	Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Լենինականի փողոց թիվ 3 հասցե	«Օֆիս Քեյր» ՍՊԸ	67 187 500 հայկական դրամ և ստեղծել 5 աշխատատեղ	67 187 500 հայկական դրամ և ստեղծել 5 աշխատատեղ	Կատարվել է՝ 67 187 500 հայկական դրամ և ստեղծել 5 աշխատատեղ	-	-
10.	891-Օ	Երևան քաղաքի կենտրոն վարչական շրջանի Լեոյի փողոց թիվ 7/3 հասցե	«Լեռ կոնստրակշնս» ՍՊԸ	900 000 000 հայկական դրամ և 50 նոր աշխատատեղ, ինչպես նաև 5-10 աշխատատեղ՝	550 000 000 հայկական դրամ	Գտնվում է դատական գործընթացում	350 000 000 հայկական դրամ և 50 նոր աշխատատեղ, ինչպես նաև	-

				պրոյեկտի ավարտից հետո			5-10 աշխատատեղ՝ պրոյեկտի ավարտից հետո	
11.	908-Օ	Կոտայքի մարզ, Ծաղկաձորի համայնք ք., Տանձաղբյուրի փողոց թիվ 34/1 հասցե	«Պրոյեկտ ինտեր- ինվեստ» ՍՊԸ	1 900 000 000 հայկական դրամ և ստեղծել առնվազն 100 նոր աշխատատեղ	880 000 000 հայկական դրամ	Կատարվել է ժամկետից շուտ	570 000 000 հայկական դրամ	450 000 000 հայկական դրամ և ստեղծել առնվազն 100 նոր աշխատատեղ
12.	910-Օ	Տավուշի մարզ, համայնք Այրում, գ. Բագրատաշեն, 3-րդ փողոց, թիվ 31 հասցե	Կարեն Անտոնյան	11 000 000 հայկական դրամ	11 000 000 հայկական դրամ	Կատարվել է ժամկետից շուտ	-	-
13.	903-Օ	Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Տիտոգրադյան 133/2 հասցե	«Էրեբունի բժշկական կենտրոն» ՓԲԸ	100 000 000 հայկական դրամ և ստեղծել առնվազն 5 աշխատատեղ	-	2025 թվականի փոխարեն կատարվել է 2024 թվականին	100 000 000 հայկական դրամ և ստեղծել առնվազն 5 աշխատատեղ	-
14.	911-Օ	Կոտայքի մարզ, համայնք Աբովյան,	«Ավանգարդ ինվեսթ» ՓԲԸ	1 400 000 000 հայկական դրամ և	900 000 000 հայկական դրամ և	Կատարվել է 900 000 000 հայկական դրամ և	500 000 000 հայկական դրամ և	-

		ք.Արզնու խճուղի 44 հասցե		ստեղծել 22 աշխատատեղ	ստեղծել 10 աշխատատեղ	ստեղծել է 10 աշխատատեղ	ստեղծել 12 աշխատատեղ	
15.	908-0	Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Օրբելու փողոց թիվ 23 հասցե	«Ռենշին» ՍՊԸ	30 500 000 000 հայկական դրամ	500 000 000 հայկական դրամ	Կատարվել է՝ 500 000 000 հայկական դրամ	10 000 000 000 հայկական դրամ	20 000 000 000 հայկական դրամ
16.	929-0	Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, ք. Արզնու խճուղի թիվ 44/1 հասցե	«Ավանգարդ ինվեսթ» ՓԲԸ	10 000 000 հայկական դրամ և ստեղծել 2 աշխատատեղ	2 000 000 հայկական դրամ	Կատարվել է՝ 2 000 000 հայկական դրամ	3 000 000 հայկական դրամ	5 000 000 հայկական դրամ և ստեղծել 2 աշխատատեղ
17.	930-0	Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Շիրակի փողոց թիվ 24 շենք, 63 հասցե	Աիդա Ալիսանյան	17 000 000 հայկական դրամ	17 000 000 հայկական դրամ	Կատարվել է՝ 17 000 000 հայկական դրամ	-	-

18.	939-0	Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Ծարավ Աղբյուրի փողոց թիվ 64 հասցե	Արթուր Վարդանյան	170 000 000 հայկական դրամ	Գույքը գնելու և փաստացի ընդունելու օրվանից սկսած առաջին և երկրորդ տարվա ընթացքում ձեռք բերել շինարարության նպատակով պահանջվող փաստաթղթերը:	Գույքը գնելու և փաստացի ընդունելու օրվանից սկսած առաջին և երկրորդ տարվա ընթացքում ձեռք բերել շինարարության նպատակով պահանջվող փաստաթղթերը: Ժամկետը լրանում է 2025 թվականին	Գույքը գնելու և փաստացի ընդունելու օրվանից սկսած առաջին և երկրորդ տարվա ընթացքում ձեռք բերել շինարարության նպատակով պահանջվող փաստաթղթերը:	170 000 000 հայկական դրամ
Նվիրաբերված օբյեկտների նվիրառուների կողմից ստանձնված ներդրումային պարտավորությունները								
19.	ՆԲ-04	Սյունիքի մարզի Տեղի համայնքի Ս.Բարխուդարյան 11 հասցե	Սյունիքի մարզի Տեղ համայնք	40 000 000 հայկական դրամ	-	-	40 000 000 հայկական դրամ	-
20.	ՆԲ 02/022	Արագածոտնի մարզի Ապարան համայնքի	Արագածոտնի մարզի Ապարան համայնք	173 994 720 հայկական դրամ	173 994 720 հայկական դրամ	Նախապատրաստ- վում է կառավարության	-	-

		Շենական գյուղի 19-րդ փողոց թիվ 32/1 հասցե				որոշման նախագիծ՝ պայմանագրային պարտավորու- թյունների ժամկետների փոփոխության համար		
21.	ՆԲ- 01/023	Կոտայքի մարզ, Ջրվեժ համայնք, գյուղ Ջրվեժ 3-րդ փողոց 5/1 հասցե	Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք	763 487 040 հայկական դրամ	-	-	-	763 487 040 հայկական դրամ
22.	ՆԲ- 02/023	Գեղարքունիքի մարզ, Ծակքար համայնք, 1-ին փողոց թիվ 16/2 հասցե	Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք	107 000 000 հայկական դրամ	12 000 000 հայկական դրամ	Շրջանառության մեջ է դրվել համապատասխան կառավարության որոշման նախագիծ՝ պայմանագիրը լուծելու ուղղությամբ	50 000 000 հայկական դրամ	45 000 000 հայկական դրամ
23.	ՆԲ 03/023	Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Պոռշյան	«Գոռ Թումանյանի անվան կրթա- մշակութային կենտրոն» ՀԿ	16 000 000 հայկական դրամ	5 000 000 հայկական դրամ	Կատարվել է՝ 25 280 000 հայկական դրամ	6 000 000 հայկական դրամ	5 000 000 հայկական դրամ

		փողոցի թիվ 35 հասցե						
Վարձակալությամբ և անհատույց օգտագործման իրավունքով տրված օբյեկտների վարձակալների և օգտագործողների կողմից ստանձնված պարտավորությունները								
24.	108/022	Գեղարքունիքի մարզ, համայնք Սևան, գյուղ Ծովագյուղ հասցեում	«Տարածքային զարգացման և հետազոտություն- ների կենտրոն» ՀԿ	16 000 000 հայկական դրամ	16 000 000 հայկական դրամ	Կատարվել է ժամկետից շուտ	-	-
25.	162/022	Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Հանրապետության փողոց թիվ 47 հասցե	«Քաղաքացիա- կան պայմանագիր» կուսակցություն	3 000 000 հայկական դրամ	3 000 000 հայկական դրամ	Պայմանագիրը լուծվել է	-	-
26.	59/023	Երևան քաղաքի կենտրոն վարչական շրջանի Արամի փողոց թիվ 44 հասցե	Սիմոնյան կրթական հիմնադրամ	100 000 000 հայկական դրամ	-	-	-	100 000 000 հայկական դրամ
27.	107/0013	Երևան քաղաքի Վ.Վաղարշյան	«Այկիդո-Այկիկայի ֆեդերացիա» ՀԿ	Այկիդո-Այկիկայի ֆեդերացիան գրառվում է	Այկիդո-Այկիկայի ֆեդերացիան գրառվում է	Կատարվում է	Այկիդո-Այկիկայի ֆեդերացիան գրառվում է	Այկիդո-Այկիկայի ֆեդերացիան գրառվում է

		փողոց թիվ 24 հասցե		Հայաստանում ճապոնական այկիդո մարտարվեստի տարածմամբ և զարգացմամբ: Հիմնական նպատակներից է առողջ ապրելակերպի գաղափարները և սկզբունքները կյանքի կոչելով՝ նպաստել Հայաստանում առողջ հասարակության ծնավորմանը:	Հայաստանում ճապոնական այկիդո մարտարվեստի տարածմամբ և զարգացմամբ: Հիմնական նպատակներից է առողջ ապրելակերպի գաղափարները և սկզբունքները կյանքի կոչելով՝ նպաստել Հայաստանում առողջ հասարակության ծնավորմանը:		Հայաստանում ճապոնական այկիդո մարտարվեստի տարածմամբ և զարգացմամբ: Հիմնական նպատակներից է առողջ ապրելակերպի գաղափարները և սկզբունքները կյանքի կոչելով՝ նպաստել Հայաստանում առողջ հասարակության ծնավորմանը:	Հայաստանում ճապոնական այկիդո մարտարվեստի տարածմամբ և զարգացմամբ: Հիմնական նպատակներից է առողջ ապրելակերպի գաղափարները և սկզբունքները կյանքի կոչելով՝ նպաստել Հայաստանում առողջ հասարակության ծնավորմանը:
28.	192/0013	Երևան քաղաքի Պ. Սևակի փողոց թիվ 11 հասցեում գտնվող անշարժ գույք	«Տիգրան Մարգարյան մարզահամալիր» բարեգործական հիմնադրամ	Աջակցել Հայաստանի Հանրապետության ըմբշամարտի՝ հունա- հռոմեական, ազատ ոճի, ծյուղո մարզաձևերի զարգացմանը, հեռանկարային և խոստումնալից	Աջակցել Հայաստանի Հանրապետության ըմբշամարտի՝ հունա- հռոմեական, ազատ ոճի, ծյուղո մարզաձևերի զարգացմանը, հեռանկարային և	Կատարվում է	Աջակցել Հայաստանի Հանրապետության ըմբշամարտի՝ հունա- հռոմեական, ազատ ոճի, ծյուղո մարզաձևերի զարգացմանը, հեռանկարային և	Աջակցել Հայաստանի Հանրապետության ըմբշամարտի՝ հունա- հռոմեական, ազատ ոճի, ծյուղո մարզաձևերի զարգացմանը, խոստումնալից

				ըմբիշների բացահայտմանը, նրանց մարզական վարպետության կատարելագործմանը:	խոստումնալից ըմբիշների բացահայտմանը, նրանց մարզական վարպետության կատարելագործմանը:		խոստումնալից ըմբիշների բացահայտմանը, նրանց մարզական վարպետության կատարելագործմանը:	ըմբիշների բացահայտմանը, նրանց մարզական վարպետության կատարելագործմանը:
